Հայաստանի Ուսանողական Ազգային Ասոցիացիա

*Հայեցակարգային փաստաթուղթ*
*ՀՓ 08-2012 առ 20.11.2012*

# «ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ»

Երևան 2012

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Բարձրագույն կրթական համայնքը կազմված է բուհերից և ուսանողներից, որոնք այս հարաբերություններում համարվում են հավասար գործընկերներ: Նույնիսկ եթե ՀՀ կառավարությունն ունի քաղաքական պատասխանատվություն բարձրագույն կրթության ոլորտում, այնուամենայնիվ բարձրագույն կրթության հիմնական շահագրգիռ կողմերը՝ հանձինս բուհերի և ուսանողների ներկայացուցիչների, իրավունք ունեն մասնակցելու վճռորոշ քաղաքականություններին և փոփոխություններին վերաբերող որոշումների ընդունմանը: Սա գործում է բոլոր մակարդակներում, սկսած անդրազգային, տեղական հաստատություններից մինչև միջազգային հաստատություններ: Բուհերը ՊԵՏՔ է իրենց գործառույթների իրականացման գործում լինեն ժողովրդավարական և հաշվի առնեն շահագրգիռ անձանց կարծիքները:

Ուսանողների՝ որպես բարձրագույն կրթական համայնքի հավասար մասնակիցների կարծիքները պետք է հաշվի առնվեն և նրանց չպետք է վերաբերվեն միայն որպես սպառողների: Եվ ուսանողներն էլ պետք է մասնակցեն նոր քաղաքականությունների վերաբերյալ որոշումների ընդունման և կրթության որակի բարելավմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքներին: Իսկ որպեսզի դրա իրականացումը լինի հնարավոր, ապա ուսանողներին անհրաժեշտ է այնպիսի օրենսդրություն, որը նրանց կպաշտպանի անարդար վերաբերմունքից՝ կապված իրենց կարծիքներն արտահայտելու հետ:

# ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Ուսանողական ինքնակառավարման մարմինները ՊԵՏՔ է համապատասխանեն որոշակի չափանիշների, որպեսզի ներկայացնեն ուսանողներին: Այսինքն՝ ուսանողական ինքնակառավարման

ANSA Proprietary Information. Patent Protected.
Unauthorized Photocopy and Duplication Prohibited.
© 2012 ANSA. All Rights Reserved.
URL: www.ansa.am, e-mail: secretariat.ansa@gmail.com

մարմինները պետք է բաց լինեն բոլոր ուսանողների համար, լինեն ժողովրդավարական՝ իրենց կառուցվածքով և սկզբունքներով, ղեկավարվեն ուսանողների կողմից, լինեն անկախ և հաշվետու այն ուսանողներին, որոնց շահերը նրանք ներկայացնում են: Իսկ այն կազմակերպությունները, որոնք չեն համապատասխանում այս չափանիշներին, ուղղակի, ուսանողներին ներկայացնող կազմակերպություն կոչվելու իրավունք չունեն::

## ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Պետք է նշենք նաև, որ ուսանողների կողմից ընդունված որոշումների քանակն անհամեմատորեն աճել է վերջին ժամանակներում, և ՀՈՒԱԱ-ն ձգտում է աշխատանքային նման մշակույթը ներդնել նաև ՀՀ-ում ու այդ միտումը դարձնել շարունակական: Քանի որ կրթական խնդիրների վերաբերյալ համագործակցությունը շարունակում է աճել, ապա անհրաժեշտ է ուսանողների ազդեցությունն ուժեղացնել այս գործընթացում:

Սակայն կան մի շարք կառույցներ և հաստատություններ, որոնք կրթությանը վերաբերող խնդիրները լուծում են առանց ուսանողների ամբողջական մասնակցության և ներգրավման: Հաշվի առնելով ՀՀ բարձրագույն կրթական համակարգում ոլորտին առնչվող որոշումների ընդունման գործընթացում ուսանողների ներգրավվածության աստիճանի պակաս լինելու միտումը՝ ՀՈւԱԱ-ն կարևորում է կարծրատիպերի կոտրումը: Ուսանողին պետք է դիտարկել որպես առանցքային դերակատար այս գործընթացներում: Շատ կարևոր է, որ ուսանողները և բուհերը ներգրավված լինեն բարձրագույն կրթությանը վերաբերող բոլոր քննարկումներում:

## ԱՄՓՈՓՈՒՄ

ANSA Proprietary Information. Patent Protected.
Unauthorized Photocopy and Duplication Prohibited.
© 2012 ANSA. All Rights Reserved.
URL: www.ansa.am, e-mail: secretariat.ansa@gmail.com

Ուսանողների ներգրավվածությունը բարձրագույն կրթության ժողովրդավարության և որակի զարգացման գործընթացում առանցքային նշանակություն ունեցող գործոններից է, և ուսանողական ինքնակառավարման մարմինները պետք է ներկայացնեն իրենց անդամների շահերը՝ ժողովրդավարական կառուցվածքի և թափանցիկության միջոցով: ՀՈՒԱՄ-ն աշխատել, աշխատում և շարունակելու է աշխատել այս ուղղությամբ:

ANSA Proprietary Information. Patent Protected.
Unauthorized Photocopy and Duplication Prohibited.
© 2012 ANSA. All Rights Reserved.
URL: *www.ansa.am*, e-mail: *secretariat.ansa@gmail.com*